ԿՐԹԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՌՅԱՆՑ

Կախված տարբեր իրավիճակներից՝ կրթական հոգեբանները պետք է կարողանան նաև հեռավար աջակցություն ցուցաբերել, հատկապես տարատեսակ արտակարգ իրավիճակների դեպքում: Կրթական հաստատության անձնակազմը, աշակերտները, ծնողները աջակցության կարիք են ունենում մշտապես, հատկապես, երբ հնարավորություն չունեն կրթական կառույց հաճախելու համար: Հեռավար հոգեբանական աջակցություն իրականացնելու ընթացքում կարևոր է

1. Պահպանել էթիկական սկզբունքները
2. Լինել հավասարապես հասանելի բոլորի համար
3. Կանխարգելել սահմանափակման հետևանքով առաջացող երկարատև հոգեբանական դժվարությունները:

Ընդհանուր կետեր հեռավար աջակցություն իրականացնելու համար

1. Ձեռք բերել համաձայնություն ծնողների հետ երեխաներին հեռավար հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար: Այս տեղեկացված համաձայնությունը ներառում է ծնողների հետ քննարկում մատուցվող ծառայությունների ցանկացած փոփոխություն դեպքում, ինչպես նաև սահմանափակումների, ռիսկերի և արդյունքների, որոնք բխում են հեռավոր աշխատաքի բնույթից: Կարևոր է փաստաթղթավորել այն ամենը, ինչ կազմակերպվում է սովորողների հետ:
2. Քանի որ իրավիճակները լինում են շատ տարբեր, իդեալական լուծումներ չկան, ուստի պետք է կարողանալ լինել ճկուն և հարմարեցնել տարբեր լուծումներ տվյալ կոնկրետ իրավիճակի:
3. Խորհրդատվական աշխատանքներ սկսելուց առաջ սահմանել աշխատանքի հստակ նպատակ, կազմել աշխատանքային պլան: Պահպանել խորհրդատվական հանդիպումների կարևոր բաղադրիչները, ինչպիսիք են նախնական հանդիպում-քննարկում ծնողի և կրթական հաստատության աջակցող անձնակազմի հետ
4. Նախքան հեռավար աջակցություն սկսելը, նպատակային է երեխային տանն աջակցող մեծահասկաների հետ միասին իրականացնել հանդիպում՝ ներկայացնելով գերհուզական իրավիճակներում երեխային աջակցելու հիմնական միջոցները, ինչպես օրինակ շնչառական վարժություններ, մկանային ռելաքսացիա
5. Խրախուսել և օգնել ընտանիքներին երեխաների խնդիրների շուրջ աշխատելիս: Տեղեկացնել նրանց, որ դուք իրենց կողքին եք և պատրաստակամ եք աջացել իրենց:
6. Երեխաների հետ հիմնական հանդիպումները սկսելուց առաջ՝ իրականացնել մեկ նախնական հանդիպում՝ տեղեկացնելով երեխաներին հեռավար աշխատանքի յուրահատկությունների, տեխնիկական առանձնահատկությունների, ծնողների դերի մասին:
7. Ընտրել և առանձնացնել այն մեթոդիակները, որոնք հնարավոր է կիրառել խորհրդատվական աշխատանքի ընթացքում հեռավար կազմակերպման դեպքում: Նախապես պատրաստ ունենալ 3-4 մեթոդիկա:
8. Իրականացնել կրթական գործընթացի հեռավար դիտարկումներ երեխաների հոգեբանական վիճակը նկատելու, հասկանալու և դրանց արագ արձագանքելու համար:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

9. Հասանելի լինել կրթական հաստատության անձնակազմի համար: Իրականացնել սեմինարներ, քննարկում-հանդիպումներ հեռավար համակարգում երեխաների հետ աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար:

10. Կազմել անհրաժեշտ հուշաթերթեր, ուղղորդող թերթիկներ սովորողների, դասավանդող անձնակազմի և ծնողների համար հեռավար ուսուցման ընթացքում ինքնախնամքի հետ կապված:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: